

«ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ

ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 116 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

«ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ

ՏՆՕՐԵՆ՝ Մ. ՀՈՒՄՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

ԱՊՐԻԼ, 2020

## Բովանդակություն

Հապավումներ.....	3
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	4
1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	5
2.1 Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ.....	5
2.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը.....	6
2.3 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հաշվետվության կազմը.....	6
2.4 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը.....	6
3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ .....	7
4 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ԹՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	9
4.1 Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումները.....	9
4.2 Ջրամատակարարում և ջրահեռացում.....	12
4.3 Կանաչապատման աշխատանքներ.....	14
4.4 Ջեռուցում և տաք ջրամատակարարում .....	16
4.5 Օդափոխություն .....	16
4.6 Շինարարական աշխատանքների կազմակերպում.....	17
5 ԵԼՔԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ .....	21
5.1 Տեղանքի ռեյիեֆը և երկրաբանությունը .....	21
5.2 Սեյսմիկ բնութագրերը .....	22
5.3 Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը .....	22
5.4 Օդային ավազան .....	23
5.5 Հողօգտագործումը.....	23
5.6 Ջրային ռեսուրսներ.....	23

5.7	Բուսական աշխարհ .....	23
6	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ .....	24
6.1	Շինարարության փուլ.....	24
7	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	30
7.1	Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները.....	30
7.2	Մոնիտորինգ.....	32
8	ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ և ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻՉՄ.....	33
9	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	34
10	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....	35
10.1	Հավելված 1 Բնապահպանական կառավարման պլան՝ մեղմացնող միջոցառումներ	35
10.2	Հավելված 2 Բնապահպանական կառավարման պլան՝ մոնիտորինգ .....	65
10.3	Հավելված 3 Բողոքի գրանցման ձև.....	72
10.4	Հավելված 4 Արտակարգ պատահարի մասին հաշվետվության ձև.....	73
10.5	Հավելված 5. Առաջին հարկի հատակագիծ .....	74
10.6	Հավելված 6. Երկրորդ հարկի հատակագիծ .....	75
10.7	Հավելված 7. Երրորդ հարկի հատակագիծ .....	76

## Հապավումներ

ԱԶԲ	Ասիական Զարգացման Բանկ
ԲԱՄ	Բողոքների արձանագրման մեխանիզմ
ԲԿՊ	Բնապահպանական կառավարման պլան
ՍԱԲ	Սեյսմիկ անվտանգության բարելավում
ՆԳՀ	Նախնական գնահատման հայտ
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության Շինարարության Նորմեր
ՀՏԶՀ	Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամը
ՀՄԿ	Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն
ՇՆԿ	Շինարարական նորմեր ու կանոններ
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագիր	«Երևանի թիվ 116 հիմնական դպրոցի կառուցում»
Ծրագրի նպատակը	ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավում
Ծրագրի պատվիրատու	Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ (ՀՏԶՀ)
Ձեռնարկող	«Մառա և դուստրեր» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցե	Ք. Երևան, Բուզանդի 1/3, գործ.հասցե՝ Վրացական 17,բն.2
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ էլ փոստ և հեռախոս՝	Էլ. փոստ՝ <a href="mailto:maraevdustrer@gmail.com">maraevdustrer@gmail.com</a> Հեռ.՝ +374 10 238 440, +374 93 740 411
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ք. Երևան, Մալաթի-Սեբաստիա վարչական շրջան, Արարատյան 2-րդ զանգված, 116 դպրոց
Կառուցապատվող տարածքի մակերեսը	11 138 քմ
Կառուցապատման մակերեսը	4034 քմ
Դպրոց նախագծային հզորությունը	600 աշակերտ

## **1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Երևանի թիվ 116 հիմնական դպրոցի կառուցումն իրականացվելու է դպրոցների Սեյսմիկ անվտանգության բարելավման (ՄԱԲ) ծրագրի շրջանակում Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) և ՀՀ կառավարության աջակցությամբ՝ արդյունքների վրա հիմնված վարկավորման (ԱՀՎ) մոդելի կիրառմամբ:

Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովմանն, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը:

Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի յուրաքանչյուր ենթածրագրի համար իրականացվում է բնապահպանական ազդեցության գնահատում՝ ԱԶԲ Անվտանգության քաղաքականության դրույթների (2009թ.) և ՀՀ օրենսդրության համաձայն: Համաձայն ՀՀ-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի (21 հունիս, 2014թ.) Հոդված 14, կետ 6-ի, 1500 ք.մ բարձր կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության ոլորտի նախագծերը դասվում են «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է Նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) պատրաստում և բնապահպանական պետական փորձաքննության իրականացում:

Երևանի թիվ 116 դպրոցի կառուցապատման մակերեսը գնահատվում է 4034 ք.մ և համաձայն սույն օրենքի պահանջում է ՆԳՀ-ի մշակում և ներկայացում բնապահպանական պետական փորձաքննության և համապատասխան բնապահպանական պետական փորձագիտական եզրակացության ստացում:

## **2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

### **2.1 Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ**

Դպրոցների Սեյսմիկ անվտանգության բարելավման (ՄԱԲ) ծրագրի համար մշակվել է Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ (ԲԳՈՒՇ) փաստաթուղթը: Փաստաթղթի նպատակն է համատեղել ՀՀ օրենսդրական նորմերի և ԱԶԲ բնապահպանական

անվտանգության մեխանիզմների պահանջները: Փաստաթուղթը մշակվել է որպես ՄԱԲ ծրագրի բնապահպանական գնահատման ուղեցույց Հայաստանի Տարածքային Ջարգացման Հիմնադրամի (ՀՏՁՀ) համար, որը հանդիսանում է Ծրագիրն իրականացնող մարմինը: Փաստաթուղթը ներառում է նաև Ծրագրի բնապահպանական գնահատման հիմնական սկզբունքները, դպրոցների ընտրության չափանիշները, կազմակերպումը և ԲԿՊ իրականացման ընթացակարգերը՝ Ծրագրի իրականացման նախագծման, նախաշինարարական, շինարարության և հետշինարարական փուլերում:

## **2.2 Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը**

Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բնապահպանական ազդեցությունները (չրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և/կամ նվազեցմանն ուղղված անհրաժեշտ բնապահպանական մեղմացման միջոցառումները:

## **2.3 Ծրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հաշվետվության կազմը**

ՇՄԱԳ հաշվետվության մեջ գնահատման ենթակա օբյեկտները և բնութագրերը սահմանված են "Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 13 կետերում:

## **2.4 Ծրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը**

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ՆԳՀ-ի մշակումն իրականացվել է ազգային օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին, ինչպես նաև ԱԶԲ-ի-բնապահպանական ուղեցույցների և ձեռնարկների դրույթներին համապատասխան: Նախնական գնահատման հայտում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախագծվող դպրոցի աշխատանքային նախագիծը,
- նախատեսվող գործունեության տեղանք կատարած այցելությունների ընթացքում հավաքագրված տվյալները և տեղեկատվությունը,
- գտնվելու տեղանքի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները,

քարտեզները,

- ծրագրի իրականացման համար մշակված Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ (ԲԳՈԻՇ) փաստաթուղթը,
- ՀՀ օրենսդրության բնապահպանական և օրենսդրական կարգավորիչ շրջանակը
- ազդակակիր և շահագրգիռ կողմերի հետ քննարկումները:

### **3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ**

#### **ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրական և կարգավորիչ շրջանակն ընդգրկում է ավելի քան 30 բնապահպանական օրենքներ: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերն ներկայացված են ստորև.

**ՀՀ Սահմանադրություն (2015).** Հռոկվածներ 10 սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանման վերարտադրության, բնական պաշարների բնական օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև հողված 8-ի համաձայն Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին:

**ՀՀ Օրենքը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014)** (Հռոկված 14, կետ 6, հռոկված 16) պահանջում է իրականացնել ծրագրերի բնապահպանական գնահատում, գննությունն ու ըստ կատեգորիաների դասակարգում կախված գործունեության ձևից, ինչպես նաև ենթարկել պետական փորձաքննության և ստանալ փորձագիտական եզրակացություն:

**ՀՀ Օրենքը Թափոնների մասին (2004)** կարգավորում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքագրումը, տեղափոխումը, պահեստավորումը, վերամշակումը և տեղադրումը ՀՀ-ում:

**ՀՀ Օրենքը Բնապահպանական Վերահսկողության մասին (2005)** կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ:



**ՀՀ Օրենքը Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին (2000)** կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:

**ՀՀ Օրենքը Քաղաքաշինության մասին (1998)**(Հոդվածներ 13,14,15,16, Գլուխ 6) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը: Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

**ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N11- Ն** «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում Շինարարական նորմերը հաստատելու մասին» (14 հունվար 2008) (Գլուխ IX):

**ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 44** Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ (28 ապրիլի 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

**ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն** Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003) պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

### **Ուղեցույցներ և ստանդարտներ**

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

**Բնապահպանական որակի ստանդարտներ**, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

Բնապահպանության նախարարության Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի կողմից մշակված **«Շինարարական աղբի կառավարման»** ուղեցույցները:

#### **4 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

##### **4.1 Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումները**

Նախագծվող թիվ 116 հիմնական դպրոցը նախատեսվում է կառուցել Երևան քաղաքի Մալաթի-Սեբաստիա վարչական շրջանի, Արարատյան 2-րդ զանգվածում գտնվող գործող թիվ 116 դպրոցի տարածքում: Նախագծվող դպրոցի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 4034 քմ, իսկ դպրոցի ընդհանուր հողատարածքի մակերեսը՝ 11138 քմ: Դպրոցի ընդհանուր հողատարածքը, համաձայն սեփականաշնորհման վկայականի, 11478,3 քմ է, սակայն դպրոցի տարածքին հարակից որոշ ավտոտնակների կառուցման հետևանքով զբաղեցվել են տարածքի որոշակի հատվածներ, և տարածքի փաստացի մակերեսը կազմում է 11138 քմ:

Համաձայն դպրոցի նախագծի (Նկ. 1)՝ դպրոցը բաղկացած է լինելու սեյսմիկ կոնստրուկտիվ կարերով միացված 5 մասնաշենքերից, որոնցից յուրաքանչյուրի մակերեսը կկազմի համապատասխանաբար՝ 1037.5, 924.5, 253, 310.2 և 742.1 քմ:

Դպրոցի տարածքում գոյություն ունեցող և նախագծով պահպանվող կաթսայատան ընդհանուր մակերեսը 54 քմ է: Նկ.1-ում ներկայացված է դպրոցի գլխավոր հատակագիծը:

Մասնաշենքերից երկուսում նախագծվում է կառուցել թվով 27 դասասենյակներ, աշխատասենյակներ և լաբորատոր սենյակներ, ինչպես նաև մեկ ճաշասենյակ: Դպրոցի հինգերորդ մասնաշենքը կձառայի որպես մարզադահլիճ և հանդիսությունների դահլիճ, 4-րդ մասնաշենքում նախագծվել են 2-ական հանդերձարաններ՝ լողասենյակներով և սանհանգույցով:

Ուսումնական մասնաշենքերը և երրորդ մասնաշենքը բաղկացած կլինեն 3 վերգետնյա հարկերից, որոնք կունենան համապատասխանաբար 3,3; 3,3; 3,3 մ բարձրություններ: Չորրորդ մասնաշենքը միահարկ է և կունենա 3,3 մ հարկի բարձրություն: Հինգերորդ մասնաշենքը կձառայի որպես մարզադահլիճը և հանդիսությունների դահլիճը, որոնք նախագծվում է միահարկ

և կունենան համապատասխանաբար 5.1 և 6.0 մ բարձրություններ: Մասնաշենքերի 1-3-րդ հարկերի հատակագծերը բերվում են Հավելված 6-8-ում:


Բոլոր մասնաշենքերի կոնստրուկտիվ լուծումներում կօգտագործվեն միաձույլ երկաթբետոնե սյուներ, հեծաններ, պատեր, մետաղական ֆերմաներ: 1-4 մասնաշենքերի տանիքները նախատեսվում է կառուցել լանջավոր՝ մետաղական ուղղանկյուն կտրվածքով խողովակներից, ցինկապատ թիթեղե ծածկույթով, 5-րդ մասնաշենքինը՝ սենդվիչ պանելներով: Տանիքները կունենան կազմակերպված արտաքին ջրահեռացում:

Նախագծվող դպրոցի տարածքում նախատեսվում է մեկ խաղահրապարակ՝ 1950 քմ մակերեսով:

Դպրոցի տարածքի ամբողջ համալիրը նախատեսվում է բարեկարգել՝ 7104 քմ տարածք, այդ թվում կանաչապատման մակերեսը՝ 1981 քմ: Բոլոր մասնաշենքերի պարագծով նախատեսված են սավվածքներ, իսկ տարածքի երթևեկելի մասերը կիրականացվեն ասֆալտբետոնե ծածկույթից և բետոնե սալիկներից, ինչը նախատեսված է իրականացնել համապատասխան թեքություններով, որը կապահովվի տարածքից մակերևույթային ջրերի հեռացումը դեպի դպրոցի հարակից փողոց և կանաչապատ գոտիներ:

Նախագծվող դպրոցի տարածքում նախատեսված է արտաքին լուսավորության համակարգ:

# Նկ.1 Նախագծվող դպրոցի գլխավոր հատակագիծը:



## 4.2 Ջրամատակարարում և ջրահեռացում

Նախագծվող դպրոցի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են գործող շինարարական նորմերի ու կանոնների (ՇՆԿ) և «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված (թիվ ԱԵ7374 առ 11.10.2019 թ.) տեխնիկական պայմաններին համաձայն, այն է՝ Կուրդինյան փողոցով անցնող կոյուղագծից և Շրջանային փողոցով անցնող ջրագծից:

Նախագծվող դպրոցի ջրամատակարարումը և ջրահեռացումը նախատեսվում է իրականացնել  $d=200$  մմ ջրագծից՝  $d=75$  մմ միացումով, և  $d=300$  մմ կոյուղագծից՝  $d=200$  մմ միացումով:

Տաք և սառը ջրամատակարարման և ջրահեռացման հաշվարկային ծախսերը (Աղ. 1) որոշվել են հաշվի առնելով դպրոցի տեխնոլոգիական պահանջները և սպասարկվող մարդկանց քանակը:

**Աղ. 1.** Ջրամատակարարման և ջրահեռացման հաշվարկային ծախսերը:


Համակարգի անվանումը	Ջրի ճնշումը մուտքի	Հաշվարկային ծախսեր			Ծանոթություն
		Մ <sup>3</sup> /ՕԸ	Մ <sup>3</sup> /ԺԱՄ	Լ/ՎԸԿ	
Ջրամատակարարում Ջ1+T3	25.0 մ	8.05	3.65	1.63	Հրդեհի դեպքում 2 x 2.5 լ/վրկ
Կոյուղի Կ1		8.05	3.65	3.23	

Ջրամատակարարման արտաքին ցանցը նախատեսվում է պոլիէթիլենային բարձր ճնշման խողովակներից՝ Փ75: Խրամուղու մեջ խողովակները կանցկացվեն են 1.10մ խորության վրա, որոնց վրա նախատեսված է պաշտպանիչ շերտ՝ ավազից և 0.2մ հաստությամբ:

Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական և տեխնոլոգիական սարքավորումներից ինքնահոս խողովակներով հեռացվում են նախագծված ներտարածքային արտաքին ցանցի մեջ և համաձայն տեխնիկական պայմանների թափվում են Կուրդինյան փողոցով անցնող Փ300 մմ կոյուղագծի մեջ:

Արտաքին ցանցը կիրկնացվի պոլիէթիլենային ծալքավոր կոյուղու խողովակներից SN-8 Փ160, 200մմ:

Նկ.2 Գլխավոր հատակագիծը ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերով:



ՏՐՕՐԵՆ		Ս. ԴՈՒՆՅԱՆ	ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 116 ԴԴՊՈՑ		
ԿԳԵ	Ս. ԴՈՒՆՅԱՆ	<i>[Signature]</i>	ԶՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
ԿԱՏՐԱՐՄԱՆ	ԿԱՏՐԱՐՄԱՆ	<i>[Signature]</i>	ՍԼ	ԱՅԿ-2	9
ԱՍԳՈՒՅ	ԿԱՏՐԱՐՄԱՆ	<i>[Signature]</i>	ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Կ1.31 ԵՐԵՎԱՆԻ		
			"ՄԱՍԻ ԵՎ ԴՈՒՍԵՐԻ" ՍՊԸ		


### 4.3 Կանաչապատման աշխատանքներ

Գոյություն ունեցող դպրոցի կանաչապատ տարածքները նախատեսվում է հնարավորինս պահպանել, իսկ ներկայացվող գործունեության ընթացքում կստեղծվի 1902 քմ նոր կանաչապատ գոտի (Նկ.2): Նախագծվող դպրոցին խանգարող թվով 21 մեծ և փոքր ծառեր նախատեսվում է տեղափոխել՝ հաշվի առնելով ծառերի կենսունակությունը և վերատնկել դպրոցի տարածքում: Բացի այդ կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում լրացուցիչ ծառատունկ, որի շրջանակում կտնկվի 7 հացենի, 11 գնդաձև ակացիա, 18 գնդաձև թույա: Կանաչապատ տարածքի հետագա խնամքը կհանձնվի դպրոցի տնօրինությանը:

Նորաստեղծ կանաչապատ գոտիների համար կբերվի 380 խմ բուսահող:

Կանաչապատ գոտիների ոռոգման գործընթացը կկազմակերպվի նախագծվող ոռոգման ցանցի միջոցով, որի միացումը կիրականացվի Կուրդինյան նրբանցքով անցնող  $\Phi 78$  մմ ոռոգման համակարգին: Ոռոգման ցանցը նախագծված է  $\Phi 63; 50; 40; 32; 25$  մմ արտաքին տրամագծով պոլիէթիլենային խողովակներով, որոնք կտեղադրվեն 0.4 մ խորության վրա, իսկ անցուղիներում խողովակները կանցկացվեն  $\Phi 100-150$  մմ պողպատյա պատյանով: Ոռոգումը կիրականացվի ռետինե ձկափողով փականներով կարճախողովակներից:

Նկ 3. Կանաչապատման աշխատանքների պլան





#### 4.4 Ջեռուցում և տաք ջրամատակարարում

Դպրոցի ջեռուցումը, նախատեսվում է իրագործել գոյություն ունեցող կաթսայատան միջոցով: Կաթսայատան շահագործումը կիրականացվի ջրային երկու կաթսաների միջոցով յուրաքանչյուրը՝ 300կվտ հզորությամբ և բնական գազի այրմամբ: Բնական գազի առավելագույն ծախսը գնահատվում է 56.6 մ<sup>3</sup>/ժ:

Կաթսայատան ջուրն օգտագործվելու է միայն ջրաջեռուցիչ կաթսայի և ջերմային ցանցերի միանվագ լցման համար, որը հետագայում կլրասնուցվի համակարգում ջրային կորուստների առաջացման դեպքում: Արտադրական հոսքաջրերի առաջացումը բացառվում է, քանի որ կաթսայատանը ջրապատրաստման գործընթաց չի նախատեսվում իրականացնել:

Դպրոցի ներքին ջեռուցման համակարգը գործելու է ջրային ջեռուցման միջոցով: Մասնաշենքերում նախատեսված է արհեստական շրջանառությամբ, երկխողովականի հորիզոնական մատակարարումով ջերմատարի փակուղային շարժումով ջեռուցման համակարգեր: Ջերմատարը նկուղային հարկի առաստաղի տակով բաժանվում է կանգնակների և մատակարարող խողովակներով բաշխվում է ջեռուցման մարտկոցներին:

Տաք ջրամատակարարումը նախատեսված է 80լ և 100լ էլեկտրա- ջրատաքացուցիչների միջոցով, որոնք կօգտագործեն արևային ֆոտովոլտային կայանից ստացված էլեկտրաէներգիան: Նախատեսվում է 30,6 կՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում դպրոցի տանիքին, որը կազմված է 90 հատ միաբյուրեղային 340 Վտ (2x60 կեսբջիջ) պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից:

#### 4.5 Օդափոխություն

Դպրոցում նախատեսված են ընդհանուր օդափոխության ներածման և արտածման համակարգեր՝ բնական և մեխանիկական եղանակով: Մեխանիկական ներածման և արտածման օդափոխությունը նախատեսված է միջանցքների, բուֆետի, արհեստանոցների, մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճների համար: Մեխանիկական արտածում է նախատեսված նաև ֆիզիկայի և քիմիայի դասասենյակի քարշիչ պահարանի համար: Օդափոխության համար կօգտագործվեն "REMAK" ֆիրմայի կոմպակտ համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել համարժեք պարամետրերով այլ համակարգով: Դահլիճների օդափոխության համակարգերի սարքավորումները կտեղադրվեն ձեռնահարկում, իսկ բուֆետի,

խոհանոցի, արհեստանոցների օդափոխության համակարգերն՝ առաջին հարկի առաստաղի տակ:

Մնացած դասասենյակներում իրականացվելու է բնական արտածում: Բնական արտածման օդատարերը բարձրանում են ձեղնահարկում 1մ և ծածկվում մետաղական ցանցով: Սանհանգույցների օդատարերը հորաններով բարձրանում են տանիքից 1մ վերև: Օդի ներածումը և արտածումը կատարվելու է  $\Delta 150$ ,  $\Delta 200$  կարգավորիչ ճաղավանդակների միջոցով: Օդափոխության համար նախատեսվում է օգտագործել ցինկապատ օդատարեր, որոնց տանիքից դուրս ջերմամեկուսացումը կիրականացվի ֆոլգապատ ապակեբամբակով:

#### **4.6 Շինարարական աշխատանքների կազմակերպում**

Ներկայացվող գործունեության նախաշինարարական փուլում, համաձայն գործող նորմերի, կիրականացվի դպրոցի տարածքի ժամանակավոր ցանկապատում մետաղական թիթեղներով ( $2,5մ \times 1,2մ$ )՝ ապահովելով առողջության և աշխատանքի անվտանգության պայմանները, ինչպես նաև կիրականացվեն շինարարական հրապարակի կազմակերպման աշխատանքներ, մասնավորապես՝

- հրապարակի լուսավորության ապահովման միջոցառումները
- ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքները՝ ապահովելով շինարարական ճամբարում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, զուգարան, աշղեկի աշխատասենյակ և այլն)
- շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրերը
- շինաշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիները:

Նախաշինարարական փուլում կիրականացվեն նաև կոմունիկացիաների վերատեղադրման և տեղափոխման աշխատանքները և վերջիններիս միացման աշխատանքները գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Շինարարական փուլում՝ ըստ շինարարական աշխատանքների կազմակերպման նախագծի, նախատեսվող գործունեությունը կիրականացվի հաջորդաբար ապամոնտաժելով գոյություն ունեցող դպրոցի եռահարկ, երկհարկ մասնաշենքերը, տաք անցումը ու մարզադալիճը:

Ապամոնտաժման աշխատանքների ավարտից հետո կիրականացվեն դպրոցի բուն շենքի կառուցման աշխատանքները: Դպրոցի շինարարության տևողությունը հաշվարկվում է 26 ամիս:

Շինաշխատանքների իրականացումը կիրականացվի մրցութային կարգով ընտրված շինարար կապալառուի կողմից: Շինարարության ընթացքում կօգտագործվեն շինարարական կազմակերպության շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում կիրականացվի անհրաժեշտ տեխնիկայի վարձակալություն:

Նախատեսվող ապամոնտաժման և կառուցապատման աշխատանքները նկարագրված են հաջորդող ենթաբաժիններում:

#### **4.5 Ապամոնտաժման աշխատանքների կազմակերպում**

Դպրոցի քանդման աշխատանքների հիմք է հանդիսանում ՀՀ կառավարության 2019 թվականի N 87-Ս «Անհատույց սեփականության իրավունքով գույքը հանձնելու և քանդման (ապամոնտաժման) աշխատանքները կազմակերպելու մասին» որոշումը<sup>1</sup>: Սույն որոշման կետ 2-ով սահմանված կարգով դպրոցի շենք-շինությունների քանդման արդյունքում ձևավորվելիք շինանյութը սեփականության իրավունքով անհատույց հանձնվելու է դպրոցի կառուցման համար ընտրված շինարարական կազմակերպությանը:

Նրկայացվող գործունեության շրջանակում նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող դպրոցի շենքի քանդում՝ ապամոնտաժման եղանակով, ինչը հնարավոր կդարձնի խուսափել քանդման ընթացքում գործունեությունից ակնկալվող բնապահպանական ազդեցությունները, մասնավորապես՝ աղմուկի և փոշու բարձր մակարդակների առաջացումը և կկրճատվի շինարարական աղբի ծավալները, քանի որ ապամոնտաժման աշխատանքները կկազմակերպվեն այնպես, որ հնարավոր կլինի պահպանել և հետագայում օգտագործել որպես երկրորդային շինարարական հումք:

Մասնաշենքերի ապամոնտաժման աշխատանքները կսկսվեն շենքի թիթեյա տանիքի և փայտե կոնստրուկցիաների, դռների, պատուհանների և մետաղական ճաղավանդակների ապամոնտաժմամբ, որից հետո կիրականացվեն սկզբում երրորդ հարկի ծածկի ապամոնտաժումը, իսկ այնուհետև կտրող գործիքների օգնությամբ մասնաշենքերի կոնստրուկտիվ կարերի և պատերի քարերի ապամոնտաժման գործողությունները, ինչպես նաև ջրթող խողովակների և ձևավոր մասերի հեռացման աշխատանքները: Այնուհետև նույն հաջորդականությամբ կիրականացվեն երկրորդ և առաջին հարկերի ապամոնտաժումը: Ապամոնտաժման

<sup>1</sup> <http://www.irtek.am/views/act.aspx?aid=98264>

աշխատանքներում կօգտագործվեն ձեռքի կտրող գործիքներ՝ բանվորական կազմի կողմից և կբացառվեն այլ խոշոր քանդող տեխնիկայի կիրառումը:

Հիմք ընդունելով N 87-Ս որոշմամբ ապամոնտաժման ախատանքներից առաջացած շին նյութերը «անհատույց սեփականության իրավունքով» շինարար-կապալառուին տրամադրելու ընթացակարգը՝ դպրոցի ապամոնտաժման աշխատանքների հետ առնչվող գործողությունները հաշվի չեն առնվել Ծրագրի նախագծային աշխատանքներում, ներառյալ նաև ծավալաթերթերում: Ապամոնտաժումից առաջացած և հետագայում օգտագործման համար պիտանի նյութերը՝ որպես երկրորդային շինարարական նյութեր, կտեղափոխվեն շին-կապալառուի պահեստ և կօգտագործվեն շինարար կապալառուի կողմից՝ այլ շինարարական աշխատանքներում, իսկ գոյացած շինարարական աղբի ծավալը կկազմի 4465 խմ, ինչը կտեղափոխվի և կթափոնակույտվի Երևանի քաղաքապետարանի որոշմամբ նախատեսված Սպանդարյան արդյունաբերական հանգույցի տարածքում գտնվող քաղաքային աղբավայր (Ն2391-Ս, 2016թ. հունիսի 30):

#### **4.6 Կառուցապատման աշխատանքների կազմակերպում**

Ապամոնտաժման աշխատանքներն ավարտելուց և տարածքը մաքրելուց հետո միայն կսկսվեն բուն դպրոցի շենքի կառուցման աշխատանքները: Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել ստորև բերվող ծավալի քանդման և հողային աշխատանքները.

- Գոյություն ունեցող մարզահրապարակի և տարածքի սալվածքի, ասֆալտբետոնյա ծածկույթի, եզրաքարերի, քարե պարիսպների և մետաղե ցանկապատերի քանդում՝ 1351 խմ:
- Տարածքի համահարթեցումից առաջացած գրունտի հանույթը կկազմի 675.45 խմ, որը կօգտագործվի հետլիցքում, քանի որ հետլիցքի համար անհրաժեշտ է 2 211.87 խմ գրունտ, որից բերվող գրունտը կկազմի 1536.42 խմ:
- Կառուցվող դպրոցի հիմքերի համար խրամուղիների և փոսորակների փորում՝ 4 592 խմ հանույթով, որից հետլիցք՝ 2 066 խմ, իսկ տեղափոխվող գրունտ՝ 2 526 խմ:
- Հենապատի, ցանկապատերի, արտաքին ինժեներական ցանցերի համար գրունտների մշակման ծավալը կկազմի, 1151 , որից հետլիցք՝ 405 խմ, իսկ տեղափոխվող գրունտը կկազմի 746 խմ:
- Բարեկարգման/կանաչապատման շրջանակում 380 խմ սևահողի մատակարարում:

Այսպիսով, տեղափոխվող շին. աղբի /5816 խմ/ և ավելորդ գրուտնի /3272 խմ/ ընդհանուր ծավալը կազմում է 9 088 խմ:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ շինանյութերը՝ կաղապարամած, ամրան, բետոնաշաղախ, կաֆել, մետլախ, լամինատ և նմանատիպ այլ նյութեր ձեռք են բերվելու լիցենզավորված մատակարարներից:

Շինմեխանիզմների համար անհրաժեշտ վառելիքի քանակը ապահովվելու է շինարարական հիմնարկի պահեստերից, իսկ խտացրած օդը նախատեսվում է մատակարարել շարժական կայաններից (ՁԻՖ-55 մակնիշի):

Շինարարական հրապարակը ներառյալ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը, շարժական տնակը և այլն կազմակերպվելու է բացառապես դպրոցի վարչական տարածքի սահմաններում:

Շինարարական տեխնիկայի կազմը ներկայացված է Աղ2-ում, իսկ Աղ. 3-ում բերվում են հիմնական պահանջվող ռեսուրսների քանակը: Շինարարության ընթացքում անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել տարածքում գոյություն ունեցող ջրագծից: Պահանջվող էլեկտրաէներգիայի մատակարարումը կիրականացվի 0,4 կՎտ օդային մալուխային գծից:

**Աղյուսակ.2 Պահանջվող հիմնական մեքենաների և մեխանիզմների կազմը:**

Խ/Խ	Անվանումը	Չափի միավոր	Քանակը
1.	Ունիվերսալ էքսկավատոր	հատ	1
2.	Ավտոբետոնախառնիչ	հատ	1
3.	Ավտոամբարձիչ	հատ	1
4.	Բետոնամուղ պոմպ	հատ	1
5.	Բետոնախառնիչ	հատ	1
6.	Ավտոինքնաթափ	հատ	4
7.	Բեռնատար ավտոմեքենա, կողավոր	հատ	1
8.	Թրթրան մակերեսային	հատ	4
9.	Թրթրան խորքային	հատ	4
10.	Փոխարկիչ թրթրիչների համար	հատ	1
11.	Շարժական կոմպրեսոր	հատ	1
12.	Հետհար մուրճ	հատ	1
13.	Եռակցող ագրեգատ	հատ	1
14.	Եռակցման տրանսֆորմատոր	հատ	3

15.	Դակիչ ձեռքի էլեկտրական	հատ	4
16.	Ձեռքի էլեկտրական դուր	հատ	4
17.	Տոփանման սարք	հատ	2

Շինարարության ընթացքում պահանջվող հիմնական աշխատողների թիվը գնահատվում է 42 մարդ, որից՝

- բանվորներ- 35 մարդ
- ինժեներներ-3 մարդ
- անվտանգության աշխատող – 3 մարդ
- այլ աշխատողներ- 1 մարդ

**Աղյուսակ. 3** Շինարարության ժամանակ պահանջվող ռեսուրսների քանակը

Անվանումը	Չափման միավորը	26 ամիս (շին. տևողությունը)
Էլեկտրաէներգիա	ԿՎա	83.5
Վառելիք	տ	10
Ջուր	լ/վրկ	0.2
Խտացրած օդ (կոմպրեսոր)	հատ	1

## 5 ԵԼՔԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

### 5.1 Տեղանքի ռելիեֆը և երկրաբանությունը

Նախագծվող թիվ 116 հիմնական դպրոցը նախատեսվում է կառուցել Երևան քաղաքի Մալաթի-Սեբաստիա վարչական շրջանի, Արարատյան 2-րդ գանգվածում գտնվող գործող թիվ 116 դպրոցի տարածքում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Քասախ-Եղվարդի հրաբխային սարավանդի սահմաններում, նրա հարավ-արևելյան եզրամասում, Էռզիոն-հողմնահարման լանջերի վրա:

Կառուցապատման տեղանքում ռելիեֆը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ-արևմուտք: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 929.0-934.0 մետրի սահմաններում:

Դպրոցի տարածքը գտնվում է հարթության վրա և բնութագրվում է փոքր թեքություններով: Դպրոցի շենքի ճարտարապետական լուծումը համապատասխանում է տարածքի ռելիեֆին:

Համաձայն կատարված աշխատանքների տվյալների հետազոտվող տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են գրունտների հետևյալ տարատեսակները՝

- ասֆալտա-բետոնե ծածկույթ -2երտ թիվ 1 (տարածումը սահմանափակ)
- լիցքային գրունտներ -2երտ թիվ 2 (տարածումը սահմանափակ)
- կավավազային գրունտներ -2երտ թիվ 4 (տարածումը համատարած)
- խոշորաբեկորային գրունտներ -2երտ թիվ 3,5,7 (տարածումը համատարած)
- կիսաժայռային և ժայռային գրունտներ -2երտ թիվ 6 (տարածումը համատարած)

Հիդրոլոգիական տեսանկյունից տեղամասում գրունտային ջրեր չեն հայտնաբերվել մինչև 14.0մ:

Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները՝ կարստ, սողանք, փլուզում և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել հիմքերի վրա, հիմնականում բացկայում են:

*Տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանները* գնահատվում են բարենպաստ նախագծվող դպրոցի շինարարական աշխատանքների իրականացման համար:

## 5.2 Մեյսմիկ բնութագրերը

Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Մեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի և ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի, Երևան քաղաքը գտնվում է սեյսմիկ *երրորդ գոտում*, գրունտների հնարավոր արագացման առավելագույն մեծությունը կազմում է  $A_{max} = 0.4g$  և ունի *9 և ավելի* բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան:

## 5.3 Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը

Երևանի կլիման խիստ կոնտինենտալ է, աչքի է ընկնում ուժեղ չորային, շոգ ամառային և բավականին հաճախակի կրկնվող ցուրտ ձմեռային եղանակներով: Օդի հարաբերական խոնավության միջին տարեկան արժեքը կազմում է 61%: Համաձայն ՀՀ ՇՆII-7.01-2011 կլիմայական տեղեկագրի, քամու միջին տարեկան արագությունը կազմում է 2,5 մ/վ, բացարձակ առավելագույն ջերմատիճանը՝ 42 °C, իսկ նվազագույն տարեկան ջերմաստիճանը կազմում է -28 °C: Տարեկան միջին մթնոլորտային տեղումների քանակը գնահատվում է 291 մմ:

#### **5.4 Օդային ավազան**

ՀՀ տարածքում օդային ավազանի գետնամերձ շերտում աղտոտվածության մոնտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ բնապահպանության նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Համաձայն ՇՄՆՄԿ-ի 2018թ.-ի տարեկան հաշվետվության, ուսումնասիրվող տարածքին ամենամոտ օդային ավազանի գետնամերձ շերտի մշտադադիտարկումների ստացիոնար դիտակետում (դիտ. 2, Շենգավիթ) օդային աղտոտիչների՝ փոշու մասնիկների, ազոտի և ծծմբի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները կազմել են համապատասխանաբար 0.132 մգ/մ<sup>3</sup>, 0.015 մգ/մ<sup>3</sup>, 0.03 մգ/մ<sup>3</sup>: Վերջիններս չեն գերազանցել ՀՀ-ում գործող սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՄԹԿ):

#### **5.5 Հողօգտագործումը**

Կառուցապատվող տարածքը հանդիսանում է Երևանի թիվ 116 դպրոցին ՀՀ կրթության և գիտության նախարարությանը անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված գույք N 01-007-0343-0002 (Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը ներկայացվում է սույն հայտին կից փաստաթղթերում):

Դպրոցի տարածքը, համաձայն սեփականաշնորհման վկայականի, կազմում է 1.14783 հա, որից կառուցապատման նպատակով օգտագործվում է 11138 քմ, մնացած տարածքը զբաղեցվել է հարակից տարածքում կառուցված ավտոտնակների սեփականատերերի կողմից:

Դպրոցի տարածքի գոյություն ունեցող ծածկույթը հիմնականում իրենից ներկայացնում է ասֆալտապատ և հողային տարածք՝ ինքնաբերաբար աճած բուսականությամբ:

#### **5.6 Ջրային ռեսուրսներ**

Կառուցապատվող դպրոցի տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Հիդրոերկրաբանական տեսակետից կառուցապատվող տարածքում գրունտային ջրերը չեն հայտնաբերվել մինչև 14.0 մ խորությունում:

#### **5.7 Բուսական աշխարհ**

Բնութագրվող տեղանքը գտնվում է արդեն իսկ յուրացված և զարգացած քաղաքային միջավայրում, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիներ:



Տարածքում առկա են ծառեր, որոնք աճում են գոյություն ունեցող դպրոցի շենքի անմիջապես հարևանությամբ, որոնք խանգարում են նախագծվող դպրոցի շինարարական աշխատանքներին: Հաշվի առնելով նշված ծառերի կենսունակությունը՝ նախատեսվում է իրականացնել այս ծառերի վերատնկում սույն գործունեության ընթացքում իրականացվող կանաչապատման աշխատանքներին պլանին համաձայն: Տարածքում առկա է նաև կանաչապատ գոտի, որտեղ աճում են միջին և փոքր տարիքի ծառատեսակներ, որոնց վրա ուղղակի ազդեցություններ չեն գնահատվում շին աշխատանքների ընթացքում:

Դպրոցի գոյություն ունեցող կանաչ գոտիների ոռոգումն կիրականացվում է ավանդական եղանակով, այն է՝ դպրոցի աշխատակիցների ուժերով:

## **6 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ**

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կանխատեսվում են շինարարության փուլում, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության տևողությամբ և կլինեն տեղայնացված՝ հիմնականում ընդգրկելով դպրոցի կառուցապատվող տարածքը: Բոլոր ազդեցությունները գնահատվում են կառավարելի՝ բնապահպանական միջոցառումների պլանում մշակված միջոցառումների արդյունավետ իրականացման դեպքում:

### **6.1 Շինարարության փուլ**

#### **6.1.1 Օղային ավազանի աղտոտվածություն**

Ծրագրի ընթացքում հիմնականում կանխատեսվում են անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ հողային աշխատանքների ընթացքում: Հորատման, բեռնման, թափոնակույտման աշխատանքների ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ՝

$$Q = K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_6 \times B \times G \times 10^6 / 3600, \text{ գ/վ}$$

որտեղ՝

$K_1$  –ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

$K_2$  –ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէռոզոլային մասնիկների, 0.02

K<sub>3</sub> –ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 2.4

K<sub>4</sub> –ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K<sub>5</sub> –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K<sub>6</sub> –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G –ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է մոտ 4 ամիս կամ

4 ամիս x 22 օր x 8 ժամ = 704 ժամ/շինարարություն :

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը կազմում է 6418.5 խմ կամ 11553.21 տ., շին. աղբի ընդհանուր զանգվածը՝ 5 816 խմ կամ 11 632 տ:

23186.12 տ. /704 ժամ=32,93 տ/ժամ

$Q=(0.05 \times 0.02 \times 2.4 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 32.93 \times 10^6) / 3600 = 0.527$  գ/վ

Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի՝

$0.527$  գ/վ x 704 ժ/2 x 3600 վ /10<sup>6</sup> = 1.34 տ

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված և չեն դիսպերսվի դպրոցի սահմաններից դուրս՝ հաշվի առնելով մասնիկների մեծ չափերը և նրանց արագ գրավիմետրիկ նստեցումը: Հետևաբար, կանխատեսվում են, որ արտանետումները չեն գերազանցի թույլատրված նորմերը, իսկ հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կբացառվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացմամբ /տե՛ս *Հավելված 1, ԲԿՊ, 5.1-Օդի աղտոտման և փոշու կառավարում/*, մասնավորապես՝ շինարար կապալառուն պարբերաբար կիրականացնի շինարարական հրապարակի ջրցանում, շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ և սահմանափակ արագությամբ (չի գերազանցի 30կմ/ժ արագությունը):

Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափագրումներ, որոնք կհամեմատվեն գործող օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

#### **6.1.2 Աղմուկի և թրթռումների ազդեցություն**

Աղմուկի համեմատաբար բարձր մակարդակներ գնահատվում են գործող դպրոցի շենքի քանդման ընթացքում, սակայն հաշվի առնելով այն, որ ամբողջովին քանդումը նախատեսվում է իրականացնել ապամոնտաժման եղանակով՝ բացառելով խոշոր տեխնիկայի կիրառումը, ապա աղմուկի հնարավոր մակարդակները չեն գերազանցի ՀՀ ազգային նորմերը: Աղմուկի մակարդակը կկառավարվի համապատասխան մեղմացնող միջոցառումների իրականացմամբ / տե՛ս *Հավելված 1, ԲԿՊ, 5.2-Աղմուկի և թրթռումների կառավարում*/: Հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ:

#### **6.1.3 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն**

ա) Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինաշխատանքների համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր կեղտաջրերի արտահոսքերը և արտանետումները:

#### **6.1.4 Հողային համակարգերի վրա ազդեցություն և թափոնների կառավարում**

ա) Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են թափոններ և շին աղբ, մասնավորապես՝ ապամոնտաժման և քանդման աշխատանքների ընթացքում կառաջանա 5816 խ.մ , իսկ բուն դպրոցի կառուցման ընթացքում՝ 3272 խ.մ շին աղբ և ավելորդ գրունտ:

Շինարարական աղբի կուտակումը կարող է հանգեցնել հողային համակարգի արտաքին շերտի աղտոտվածությանը: Դրանից խուսափելու նպատակով ԲԿՊ-ում նախատեսված են միջոցառումներ /տես *Հավելված 1, ԲԿՊ, 5.4-Բուսահողի պահպանում և կառավարում, 8-Թափոնների և նյութերի կառավարման պլան*/, մասնավորապես առաջացած շինարարական աղբը ժամանակավոր կուտակվելու է շինհրապարակում կանոնավոր կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև պարբերաբար տեղափոխվելու և պահվելու է Երևանի

քաղաքապետարանի որոշմամբ նախատեսված Սպանդարյան արդյունաբերական հանգույցի տարածքում գտնվող քաղաքային աղբավայր (Ն2391-Ա, 2016թ. հունիսի 30):

Բացի վերը նշվածը, շին աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր վնասակար նյութերի արտահոսքերը և արտանետումները, իսկ շինարարական մեքենաների երթևեկությունն ինչպես նշվեց կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ:

Գործունեության ընթացքում նախատեսվում են նաև կենցաղային աղբի կառավարման միջոցառումներ /տես *Հավելված 1, ԲԿՊ, 8-Թափոնների և նյութերի կառավարման պլան/*, մասնավորապես նախատեսվում է աղբամանների տեղադրում և գոյացած աղբի կանոնավոր հեռացում:

Բ) Տարածքում առկա բուսահողի վրա նախատեսվող գործունեության հետևանքով որևէ ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում, քանի որ նոր դպրոցի կառուցումը կիրականցվի արդեն իսկ գործող դպրոցի ապամոնտաժումից առաջացած և շինաղբից մաքրված տարածքում, որտեղ չկա ուղղակի ազդեցության ենթակա բուսահող:

Բնապահպանական կառավարման պլանում նախատեսված գործողությունների շրջանակում կբացառվեն տարածքի կանաչ գոտիներում առկա բուսահողի վրա անուղղակի ազդեցությունները (տես Հավելված 1, 5.4 ենթագլուխ՝ Բուսահողի կառավարման միջոցառումներ):

#### **6.1.5. Ազդեցություն բուսական աշխարհի վրա**

ա) Նախագծվող շենքի կառուցման հետևանքով ազդեցության կենթարկվեն 21 ծառեր, որոնք նախատեսվում է վերատնկել՝ հաշվի առնելով ծառերի կենսունակությունը: Նախատեսվում է նաև իրականացնել նոր ծառաթփային բուսականության ստեղծում (Նկ 2.): Տնկման աշխատանքների համար կօգտագործվեն տեղական պայմաններին համապատասխանող և դպրոցամերձ տարածքներում կիրառելի ծառերի և թփերի տեսակներ, մասնավորապես՝ կտնկվի 7 հացենի, 11 գնդաձև սկացիա, և 18 թույա: Կանաչապատման նախագիծը համաձայնեցված է Երևանի քաղաքապետարանի հետ: Նախատեսվում է լրացուցիչ 380 խմ բուսահողի բերում:

Կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է նոր գազոնապատ 1981 ք մ տարածքների ստեղծում: Բուսականության հետագա խնամքը կհանձնվի դպրոցի տնօրինությանը, իսկ ոռոգում կիրականացվի նախատեսվող ոռոգման համակարգի միջոցով (տես 4.3 ենթագլուխ):

Բ) Շինարարության ընթացքում տարածքում առկա բուսականության, մասնավորապես կանաչ գոտու պահպանության միջոցառումները ներառվել են ԲԿՊ-ում /տես *Հավելված 1 ԲԿՊ*, 5.3-Բուսականության պահպանում և կառավարում/:

Շինարարության և հետշինարարական փուլերում կիրականացվեն տարածքում առկա ծառերի և թփերի վիճակի մշտադիտարկում/վերահսկում ծրագրի պատվիրատուի՝ ՀՏՁՀ-ի կողմից, ԱԶԲ-ի կողմից մշակված մոնիտորինգային ստուգաթեթիկին համաձայն, որի ձևաչափը ներկայացված է *Հավելված 2*-ում: Ծրագրի շրջանակում գործող հետշինարարական մոնիտորինգը սահմանվում է *մեկ տարի*, որի ընթացքում կպշոդականություն չապահովող ծառերը կփոխարինվեն նորերով: Նորատունկ կանաչ գոտու խնամքը կհանձնվի *դպրոցի տնօրինությանը*:

#### **6.1.6 Աշխատանքի անվտանգություն և առողջություն**

Ծրագիրը մեծ անդրադարձ է կատարում հանրության անվտանգության և առողջության, ինչպես նաև շինարարական կազմակերպության աշխատողների անվտանգության և առողջության ապահովման հարցերին, որի համար նախատեսված են մի շարք միջոցառումներ հնարավոր ազդեցությունները և անհարմարությունները բացառելու կամ մեղմացնելու նպատակով:

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի /տես *Հավելված 1, ԲԿՊ, 2-Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան/*: *Հավելված 4-ում* ներկայացվում է արտակարգ պատահարի հաշվետվության ձևը:

### 6.1.7 Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները

Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- Հրդեհի առաջացում
- Հեղուկ նյութերի արտահոսք
- Աշխատողների վնասվածքներ
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարներ

Հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու նպատակով պարբերաբար շինարարական տեղամասում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:
- Շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվելու են հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն:
- Բանվորական և դեկավար կազմը ապահովվելու է սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ անթափանց տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան (ձևաչափը տես Հավելված 4), որը շինարար կապալառուն պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել: Բոլոր գրանցամատյանները կվերահսկվեն և կուսումնասիրվեն ՀՏՁՀ-ի կողմից բնապահապանական և սոցիալական մոնիտորինգային այցելությունների ընթացքում, անհրաժեշտության դեպքում կձեռնարկվեն իրազեկության բարձրացման միջոցառումներ:

- Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:

Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկը, իսկ առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

## **7 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

### **7.1 Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները**

Ծրագրի համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին, ինչպես նաև ԱԶԲ բնապահպանական անվտանգության սկզբունքներին նախատեսվում է ապահովել բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) միջոցով: ԲԿՊ պարունակում է Ծրագրի բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն և շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներն, ինչպես նաև մոնիտորինգի գործողությունները՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին: Ծրագրի համար մշակված ԲԿՊ ամբողջական ներկայացված է *Հավելված 1-ում*:

ԲԿՊ-ն որպես անբաժանելի մաս կցվելու է հիմնական շինարար կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին: Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ի իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

Ստորև ամփոփ բերվում են նախատեսվող գործունեությունից ակնկալվող ազդեցությունները մեղմացնող և/կամ բացառող հիմնական բնապահպանական և աշխատանքի և առողջության ապահովման միջոցառումներն, որոնք պատշաճ ձևով կիրականացվեն ենթածրագրի իրականացման ընթացքում.

- տեղեկատվության հրապարակում և հանրային լուսմներ
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում

- շինարական աղբի կանանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև հրապարակում կտեղադրվեն կենցաղային թափոնների համար նախատեսված աղբամաններ
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերին համապատասխան
- շինարարական մեքենաների տեղաշարժը կիրականացվի սահմանափակ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ
- աղմուկ առաջացնող աշխատանքներն կիրականացվեն թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին մինչև ժամը 18:00
- շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարից
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե կամ ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա
- ենթածրագրի ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ
- շինարար կապալառուն պարտավոր է ապահովել աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումները, ներառյալ՝ բանվորական կազմին ապահովել սեզոնային արտահագուստով և անվտանգության սաղավարտներով
- տարածքում կանաչապատ գոտիների ընդլայնում, ինչպես նաև ազդեցության ենթակա ծառերի վերատնկում, նոր արժեքավոր ծառատեսակների տնկում և սիզամարգերի ստեղծում

Ենթածրագրի շրջանակում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը (առանց հարկերի) գնահատվում է 7 717 334 ՀՀ դրամ: Նշված արժեքը (Ադ. 4) ներառում է նախագծման փուլում՝ տեղեկատվության հրապարակման և հանրային ծանուցման, բնապահպանական փորձաքննության համար նախատեսվող ծախսերը, շինարարության փուլում՝ շինարարական աղբի հեռացման, բուսահողի բերման և կանաչապատման աշխատանքները: Նշված միջոցառումների ծախսերը հաշվի են առնված դպրոցի նախագծի ծավալաթերթերում: Բնապահպանական կառավարման պլանում ներկայացված մնացած միջոցառումները շինարար կապալառուն կիրականացնի ենթածրագրի շրջանակում հատկացվող օժանդակ ծախսերի գումարից, որը կազմում է ծրագրի արժեքի մոտ 2 %-ը:



#### Աղյուսակ. 4

Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքները (առանց հարկերի):

Մեղմացնող միջոցառումը	Միավորը	Ծավալը/Քանակը	Գումարային արժեքը (ՀՀ դրամ)	Ժամանակացույցը
հանրային ծանուցում	հատ	2	10 000	նախագծման փուլ
բնապահպանական փորձաքննություն	-	1	15 000	նախագծման փուլ
շին աղբի տեղափոխում	խմ	9 088	6 984 710	շինարարության փուլ
բուսահողի բերում (ներառյալ բարձման, փոման և հարթեցման աշխ.)	խմ	380	632 996	շինարարության փուլ, բարեկարգման աշխատանքներ
սիզամարզի տնկում	քմ	1902	24 816	շինարարության փուլ, բարեկարգման աշխատանքներ
ծառերի վերատնկում	հատ	21	27 348	նախա-շինարարության փուլ
ծառերի տնկում	հատ	36	22 464	շինարարության փուլ, բարեկարգման աշխատանքներ
<b>Ընդամենը (ՀՀ դրամ)</b>				<b>7 717 334</b>

#### 7.2 Մոնիտորինգ

ՀՏՁ-ի կողմից կանոնավոր մոնիտորինգ է իրականացվելու ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով: ՀՏՁ-ի բնապահպանության և սոցիալական երաշխիքների մասնագետներն իրականացնելու է մոնիտորինգի դաշտային ստուգայցեր յուրաքանչյուր ենթածրագրի կտրվածքով երկու շաբաթը մեկ անգամ (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիտորինգի ստուգաթերթիկում, որի ձևաչափը ներկայացվում է *Հավելված 2*:

ՀՏՁ-ն հանձնարարելու է տեխնիկական վերահսկողին իրականացնել ամենօրյա հսկողություն: Տեխնիկական վերահսկողները հսկելու են նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը և ժամանակին տեղեկացնելու են ՀՏՁ-ին նկատված անհամապատասխանությունների մասին:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել *փոշու, աղմուկի, ջրի որակի և թրթռումների մակարդակի պարամետրերի չափագրումներն* իրականացնել ազդակիր կողմերի համապատասխան բողոքների դեպքերում: Բողոքների գրանցամատյանի ձևաչափը բերված է *Հավելված 3*-ում:

## **8 ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՐՉԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ**

Բնապահպանական պետական փորձաքննության շրջանակում 2019 թվականի սեպտեմբերի 12-ին՝ ժամը 14:30-ին, Երևանի թիվ 116 հիմնական դպրոցի շենքում (Մալաթի-Սեբաստիա վարչական շրջան, Արարատյան 2-րդ զանգված հասցեում) իրականացվել է դպրոցի կառուցման նախագծի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկում: Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2019թ.-ի օգոստոսի 29-ի համարում: Դպրոցի կառուցման աշխատանքային նախագծի և ԲԿՊ-ի փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրվել են ՀՏԶՀ-ի պաշտոնական կայքում ([www.atdf.am](http://www.atdf.am))՝ գործող հանրային ծանուցման ընթացակարգին համաձայն (հանրային քննարկումը անցկացնելու օրվանից առնվազն 7 աշխատանքային օր առաջ):

Հանրային քննարկմանը ներկա են գտնվել բոլոր շահագրգիռ և ազդակակիր կողմերը, ներառյալ ներկայացուցիչներ կառուցվող դպրոցի նախագծային կազմակերպությունից և ՀՏԶՀ-ից: Քննարկման արձանագրությունը և մասնակիցների ցանկը ներկայացվում է փաստաթղթերին կից:

ՀՏԶՀ կողմից ենթաձրագրի իրականացման ողջ ընթացքում ներդրվելու է բողոքների անդրադարձման մեխանիզմ՝ (ԲԱՄ) հաշվի առնելով ԱԶԲ պահաջները և ՍԱԲ ծրագրի առանձնահատկությունները: ԲԱՄ-ի հիմնական գործառույթները ներկայացված են ԲԿՊ-ում (*Հավելված 1*), իսկ բողոքների գրանցման ձևը բերվում է *Հավելված 3*-ում: Առավել մանրամասն տեղեկատվությունը շահառուների հետ կապի և բողոքների լուծման մեխանիզմների վերաբերյալ ներկայացված է ՀՏԶՀ-ի պաշտոնական կայքում ([www.atdf.am](http://www.atdf.am)):

## 9 ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011 ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- ԱԴԲ 2015: Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:
- Îàðèàè-âñèèà óéàçàíëÿ ì ðàñ-âðó àíáäîñîâ çàäÿçÿðèèð ààùáñðâ á àðèñðâðð ñ àííâíèè ãàçàèè ìðèèðâèííð è ìðèèðâèíí-ìðèèçâíñðââíííð èíðâèííð. 1986, Москва.

10 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

10.1 Հավելված 1 Բնապահպանական կառավարման պլան՝ մեղմացնող միջոցառումներ

Աղյուսակ 1: Մեղմացնող միջոցառումներ					
Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Միջոցառման իրականացման պատասխանատու մարմին	Մոնիտորինգի պատասխանատու մարմին	Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է ծրագրի արժեքի մոտ 1.2-1.5%
<b>ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ</b>					
1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և նրա կան եզրակացության ձևաչափերում	Համաձայն ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի (07. 2014 թ.) ըստ ազդեցության գործունեության դասակարգվում է «Գ» կատեգորիա:	1.1. Մշակվել և ՇՄՆ է ներկայացվելու դպրոցի կառուցման նախագծի՝ ՆԳՀ հաշվետվությունը՝ բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու նպատակով:	«Մառա և դստրեր» ՍՊԸ, ՀՏԶՀ	ՀՏԶՀ	
2. Հանրային քննարկումներ, հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են Ծրագրի ժամկետների ձգձգման պատճառ դառնալ:	2.1. ՄԱԲ ծրագրի, դպրոցի կառուցման նախագծի և նախատեսվող գործունեությունից ակնակալվող ազդեցությունների վերաբերյալ հանրային քննարկումը (1-ին	ՀՏԶՀ «Մառա և դստրեր» ՍՊԸ	ՀՏԶՀ	

		<p>քննարկում)  իրականացվել է 2019 թվականի սեպտեմբերի 12-ին:</p> <p>2.2. Հանրային քննարկման մասին հայտարարությունները տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում օրենքով սահմանված կարգով, այն է՝ քննարկումից առնվազն յոթ աշխատանքային օր առաջ:</p> <p>2.3. Հանրային լուսմներում ներկայացվել է նաև Բողոքների Անդրադարձման Մեխանիզմը (ԲԱՄ), որի ներդրումը կիրականացվի ՀՏՁՀ-ի կողմից սահմանված մեխանիզմին համաձայն (զանգահարել ՀՏՁՀ-ի թեժ գիծ և/կամ տես 4.1 ենթակետ):</p>	<p>ՀՏՁՀ  «Մառա և դստրեր»  ՍՊԸ  ՀՏՁՀ</p> <p>ՀՏՁՀ</p>		
<p>3. Մրցութային և պայմանագրային և փաստաթղթերի պատրաստում</p>	<p>ԲԿՊ-ի պահանջները անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ դպրոցի շինարարության և շահագործման փուլերում:</p>	<p>3.1. Աշխատանքային նախագիծը մշակվել է հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև մրցութային և պայմանագրային</p>	<p>ՀՏՁՀ,  «Մառա և դստրեր»  ՍՊԸ</p>	<p>ՀՏՁՀ</p>	

**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ (ՔԱՆԴՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՒՄ)**

**1. Առողջության և աշխատանքային անվտանգության պլան**


<p>4. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները</p>	<p>ԲԿՊ-ի և դպրոցի վերակառուցման ծրագրի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման:</p> <p>Շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած հիվանդությունը, վնասվածքը կամ մահը վտանգավոր նյութերի, շին առարկաների ոչ ճիշտ դասավորման և շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպման պատճառով անընդունելի է և կպահանջի համապատասխան պատժամիջոցների կիրառում:</p>	<p>4.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:</p> <p>4.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, պաստառներ այլ:</p> <p>4.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը, մասնավորապես՝ չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում:</p> <p>4.4. Անհրաժեշտ է ապահովել <b>կրակմարիչի</b> առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	<p>ՀՏՁՀ ՏՎԽ</p>	
---	---	---	---	---------------------	--

		<p>մեքենաներում և հատվածներում:</p> <p>4.5. Անհրաժեշտ է ապահովել <b>առաջին բուժ օգնության դեղատուփի</b> առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:</p> <p>4.6. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի <b>սեզոնային արտահագուստով</b> և այլ անձնական պաշտպանիչ սարքավորումով, ինչպես նաև անհրաժեշտ է նախատեսել լծակներ դրանց կիրառումն ապահովելու համար:</p> <p>4.7. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել և հաշվետվության ձևով ներկայացնել ՀՏՁՀ-ին:</p> <p>4.8. Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի <b>անվտանգության հրահանգավորում</b>՝ աշխատանքը սկսելուց առաջ: Հրահանգավորման իրադարձությունը պատշաճ պետք է գրանցել</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	--	---	---	--	--



		անվտանգության գրանցամատյանում: 4.9. Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը:	Կապալառու		
<b>2. Հանրության հետ կապերի և իրազեկման պլան</b>					
4. Հանրության իրազեկման բարձրացում, բողոքարկման մեխանիզմ	Ազդեցության ենթակա կողմերի և համայնքների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների, որի արդյունքում կարող են տեղի ունենալ Ծրագրի ժամկետների հետաձգումներ:	4.1. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախատեսվում է իրականացնել հանդիպում ազդակակիր անձանց հետ և տեղեկացնել ԲԱՄ-ի մասին: Հանդիպման ընթացքում կներկայացվի և կներդրվի ԲԱՄ-ը՝ համաձայն որի. Ա: Շինարարական հրապարակում՝ դպրոցի տարածքում, անհրաժեշտ է հիմնել հիմնական կամ շարժական գրասենյակ: Բ: Անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ/ ցուցապաստառներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության գրասենյակի գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց, ինչպես նաև հեռախոսահամարների մասին, էլեկտրոնային հասցեներ այդ	ՀՏՁՀ Կապալառու	ՀՏՁՀ ՏՎԽ	




		<p>թվում ՀՏՁՀ-ի համապատասխան բաժնի հեռախոսահամարներ, էլեկտրոնային հասցեներ:</p> <p>Գ. Գրասենյակում անհրաժեշտ է պահել <b>բողոքների գրանցամատյան:</b> Բողոքի գրանցման ձևը տես Հավելված 1-ում:</p> <p>Դ. Անհրաժեշտ է նշանակել <b>սոցիալական հարցերով զբաղվող պատասխանատու անձ</b>, իսկ 15 օրվա ընթացքում պատասխանել դիմորդին հարցի լուծման վերաբերյալ:</p>			
<b>3. Երջակա միջավայրի պահպանության պլան</b>					
<p>5. Հողային աշխատանքներ:</p> <p>Շինանյութերի փոխադրումներ:</p> <p>Այլ շինարարական աշխատանքներ:</p>	<p>Դպրոցի հարակից տարածքում (մոտ 3-50մ հեռավորության վրա) առկա ազդակիրների, մասնավորապես՝ բնակելի տներ և հանրային նշանակության կառույցներ, վրա գնահատվում են.</p> <p>- գոյություն ունեցող դպրոցի շենքի ապամոնտաժման աշխատանքների ընթացքում փոշու արտանետումներ,</p>	<p>5.1. <b>Օդի աղտոտման և փոշու կառավարում</b></p> <p>5.1.1. Օդի որակի չափազրուումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում:</p> <p>5.1.2. Անհրաժեշտ է իրականացնել պարբերական ջրցանում շինհրապարակից փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով:</p> <p>5.1.3. Անհրաժեշտ է</p>	ՀՏՁՀ	ՏՎԽ	

<p>- տրանսպորտային միջոցների երթևեկության, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործման ընթացքում այլ վտանգավոր ծխագազերի արտանետումներ:</p>  <p>Գոյություն ունեցող շենքի ապամոնտաժման և նախագծվող դպրոցի շենքի կառուցման աշխատանքների ընթացքում գնահատվում են աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:</p>	<p>նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար:</p> <p>5.1.4. Մեքենաների երթևեկությունն անհրաժեշտ է իրականացնել սահմանափակ 30կմ/ժ չգերազանցող արագությամբ երթևեկություննից առաջացող արտանետումները կրճատելու համար:</p> <p>5.2. <b>Աղմուկի և թրթռումների կառավարում</b></p> <p>5.2.1. Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>ՀՏՁՀ</p>			
---	--	---	--	--	--




		<p>մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:</p> <p>5.2.2. Անհրաժեշտ է խուսափել մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են՝ մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, հասարակական շենքերը և այլն:</p> <p>5.2.3. Աղմուկ առաջացնող աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել օրվա ցերեկային ժամերին՝ 9-18:00:</p> <p>5.2.4. Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:</p> <p>5.2.5. Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	--	---	---	--	--

	<p>- Նախագծվող դպրոցի տարածքում գոյություն ունեցող բուսականության վրա ազդեցություն:</p>  	<p>5.2.6. Անհաժեշտ է ապահովել բոլոր բանվորներին համապատասխան ԱՊՄ-բով, այդ թվում՝ ականջակալներով:</p> <p>5.3. <b>Բուսականության պահպանում և կառավարում</b></p> <p>5.3.1. Անհրաժեշտ է նախատեսել վնասման ենթակա ծառերի և թփերի պահպանման միջոցառումներ, որպեսզի այդպիսի ծառերը լինեն հեշտությամբ ճանաչելի աշխատողների, տրանսպորտային միջոցների համար և պաշտպանված լինեն շին գործողությունների, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից և հնարավոր այլ ազդեցություններից:</p> <p>5.3.2. Անհրաժեշտ է իրականացնել ազդեցության ենթարկված</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	---	---	--	--	--


		<p>բուսականության պաստառապատում և ջրցանում փոշու ազդեցությունները նվազեցնելու նպատակով:</p> <p>5.3.3. Անհրաժեշտ է սպահովել տարածքում առկա բուսականության ոռոգման միջոցառումներ շին- աշխատանքների ընթացքում:</p> <p>5.3.4. Անհրաժեշտ է խուսափել տարածքում պահպանվող ծառերի և թփերի հատումից և վերջիններիս վրա հնարավոր այլ ազդեցություններից, որոնք ըստ դպրոցի նախագծի չեն խանգարում շինարարական աշխատանքներին, իսկ հնարավոր խոչընդոտների առկայության դեպքում տեղեկացնել ՀՏԶ-ին:</p> <p>5.3.5. Անհրաժեշտ է իրականացնել</p>	<p>Կապալառու, Դպրոցի տնօրինություն</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	--	---	--	--	--

	<p>- Նախագծվող դպրոցի տարածքում չկա ուղղակի ազդեցություն ենթակա բուսահող: Բուսահողը առկա է դպրոցի կանաչ գոտու սահմաններում:</p> 	<p>դպրոցի կառուցման աշխատանքներին խանգարող թվով <b>21 ծառերի</b> վերատնկման գործողությունները՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծային պլանին համաձայն:</p> <p>5.3.6. Անհրաժեշտ է բացառել տարածքում առկա հատված բուսականության այրումը:</p> <p>5.4. <b>Բուսահողի պահպանում և կառավարում</b></p> <p>5.4.1. Անհրաժեշտ է շինաշխատանքների ընթացքում հնարավորինս բացառել տարածքում կանաչ գոտիների սահմաններում առկա բուսահողի վրա ազդեցությունները, ինչպիսիք են՝ շինթափոնների տեղադրում,</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	---	---	-----------------------------------	--	--

		<p>կեղտաջրերի/բետոնաջրերի հեռացում, և այլ գործողություններ:</p> <p>5.4.2. Բետոնացման աշխատանքներում առաջացած հնարավոր բետոնաջրերի/կեղտաջրերի հեռացումը իրականացնել կեղտաջրերի համար նախատեսվող տարայում, որտեղ մեխանիկական նստեցումից առաջացած ջրային ֆրակցիան ըստ անհրաժեշտության օգտագործել հրապարակի ջրցանման նպատակով, իսկ նստեցումից առաջացած չոր մնացարդը՝ հեռացնել թույլատրված աղբավայր:</p>	Կապալառու		
<b>Ենթակառուցվածքների և այլ ազդակակիր օբյեկտների կառավարման պլան</b>					
6. Ենթակառուցվածքների և այլ ազդակիր օբյեկտների վրա ազդեցություն:	- Կառուցապատման տարածքով անցնող գազային խողովակի և գոյություն ունեցող կաթսայատան վրա ազդեցություն:	6.1. Անհրաժեշտ է ձեռնարկել գազային խողովակի ապամոնտաժման /վերատեղադրման աշխատանքները	Կապալառու	ՀՏՁՀ ՏՎԽ	

	  <p>– Դեպի դպրոցի բակ բացվող դարպասի և ընդհանուր պատի, ինչպես նաև տարածքում ներկատուցված ստորգետնյա ավտոնակների վրա</p>  <p>ազդեցություն:</p>	<p>նախագծով նախատեսվող շինարարական աշխատանքների կամագակերպման պլանի համաձայն:</p> <p>6.2. Անհրաժեշտ է իրականացնել դպրոցի կաթսայատան պահպանման միջոցառումները և չխոչընդոտել ջեռուցման շրջանում կաթսայատան սպասարկման և շահագործման աշխատանքների կազմակերպմանը:</p> <p>6.3. Նախաշինարարական և աշխատանքների փուլում շահագրգիռ և ազդակակիր կողմերի հետ համատեղ նախատեսվում է իրականացնել տարածքում առկա ազդակակիր ենթակառուցվածքների, համատեղ պատերի և ավտոտնակների ելակետային/նախնական վիճակի գնահատում և արձանագրում:</p>	<p>Կապալառու, ՀՏԶՀ</p> <p>Կապալառու, ՀՏԶՀ, Ազդակակիրներ</p>		
--	---	---	--	--	--



		<p>6.4. Դեպի դպրոցի տարածք ներկատուցված ավտոնակների, ընդհանուր պատի և դարպասի վրա հնարավոր ֆիզիկական վնասները կվերացվեն և վերջիններս կբերվեն իրենց նախնական վիճակին դպրոցի տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացման ընթացքում:</p> <p>6.5. Տարածքով անցնող այլ ենթակառուցվածքների/կոմունիկացիաների (կոյուղագիծ, ջրագիծ կամ ի հայտ եկած այլ ենթակառուցվածքներ) տեղափոխման աշխատանքներն իրականացնել նախագծով ներկայացվող պլանի համաձայն, ինչպես նաև անհրաժեշտ է ազդակակիր կողմերին նախապես տեղեկացնել</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	---	---	-----------------------------------	--	--

		<p>հնարավոր անջատումների/խա փանումների վերաբերյալ:</p> <p>6.6. Անհրաժեշտ է շինարարական աշխատանքների ընթացքում բացառել դպրոցի տարածքին հարակից կառույցների, բնակելի տների, համատեղ պատերի վրա հնարավոր ֆիզիկական ազդեցությունները, իսկ հասցրված վնասները կվերականգնվեն շինարար կապալառուի կողմից սեփական միջոցների հաշվին:</p> <p>6.7. Ենթակառուցվածքնե րի վրա կանխատեսվող ազդեցությունները և նախատեսվող աշխատանքների շրջանակը ներկայացվել են դպրոցի նախագծի վերաբերյալ իրականացված հանրային քննարկումների և ազդակակիրների</p>	<p>Կապալառու,</p> <p>«Մառա և դստեր» ՍՊԸ, ՀՏԶՀ</p>		
--	--	---	---	--	--



		<p>բուսահողի          ժամանակավոր          պահեստավորման,          նյութերի և          թափոնների          ժամանակավոր          կուտակման տեղերը,          մեքենաների և          սարքավորումների          կայանատեղերը և          այլն:</p> <p>7.3. Անհրաժեշտ է          իրականացնել          շինհրապարակի          ցանկապատում,          ծրագրի ցուցանակի          ու մուտքն արգելող          նշանների          տեղադրում:</p> <p>7.4. Անհրաժեշտ է          նվազագույնի          հասցնել բաց հորերի          քանակը, հետլիցքն          իրականացնել          հնարավորինս կարճ          ժամկետներում և          բացառել անխմաստ          բաց հորերի          առկայությունը          շինհրապարակում:</p> <p>7.5. ձեռնարկել բաց          հորերի տեսանելի          կերպով          ցանկապատում և          անհրաժեշտության          դեպքում՝          նախազգուշացնող</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	--	--	--	--	--

		նշանների տեղադրում: 7.6. Շինհրապարակի տարածքը պետք է պահել մաքուր և կարգավորված:	Կապալառու		
<b>6. Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան</b>					
8. Շինհրապարակ մուտք և ելք գործող մեքենաներ	Դպրոցի մոտեցման ճանապարհների վիճակը գնահատվում է լավ երթևեկության կազմակերպման համար: Երթևեկության և մոտեցման ճանապարհների վրա գնահատվում են հետևյալ ազդեցությունները. → երթևեկության խափանումներ → երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ → փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ → հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում → շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհներին վնասների պատճառում:	8.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհներին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով:	Կապալառու	ՀՏՁՀ ՏՎԽ	
		8.2. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը և մոտեցումը անհրաժեշտ է կազմակերպել շին հրապարակ մուտքի և ելքի համար նախատեսված ճանապարհով, այն է՝ գործող դպրոցի շենքի հետին մասում ժամանակավոր մուտքի կազմակերպմամբ:	Կապալառու		
		8.3. Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել	Կապալառու		

		<p>դպրոցի մոտեցման ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհի նախնական վիճակը:</p> <p>8.4. Հնարավորինս պետք է խուսափել երթևեկել քաղաքային երթևեկության ծանրաբեռնված ժամերին:</p> <p>8.5. Անհրաժեշտության դեպքում ձեռք բերել պետ. մարմիններից շին տրանսպորտային միջոցների երթևեկության ուղիների թույլտվություն:</p> <p>8.6. Շինարարական հրապարակի մուտքերն ու ելքերն անհրաժեշտ է կազմակերպել գործող դպրոցի շենքի հետնամասով՝ հիմնական մուտքին հակառակ, ինչ կնվազացնի խոչընդոտները ընդհանուր երթևեկությանը և հասարակական անվտանգությանը:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	--	---	--	--	--

		8.7. Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ:	Է	Կապալառու		
		8.8. Վարորդները կվերապատրաստվեն ԵԿՊ-ի (Երթևեկության կառավարման պլանը) և անվտանգության վերաբերյալ:		Կապալառու		
		8.9. Մեքենաների սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում:	և	Կապալառու		
		8.10. Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս:	Է	Կապալառու		
		8.11. Անհրաժեշտ է ապահովել, որպեսզի փոխադրամիջոցները սարքավորված լինեն ադմուկի կլանիչներով և խլացուցիչներով:	Է	Կապալառու		
		8.12. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական	Է	Կապալառու		

		<p>վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի հոսքը կանխելու համար:</p> <p>8.13. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և փոխարինել պատշաճ վիճակի մեքենաներով:</p> <p>8.14. Նախքան շինհրապարակից հեռանալն անհրաժեշտ է ապահովել անվադողերը մաքրելու միջոցներով (աշխատանքային տեղամասում կոպճային մակերևույթների և փոխադրամիջոցների լվացման միջոցներ՝ համապատասխան արտահոսքը կանխարգելման համակարգով) շինարարական աղբն ու ցեխի տարածումը կանխելու համար:</p> <p>8.15. Պարբերաբար պետք է ստուգել հարակից ճանապարհների</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	--	---	--	--	--





		<p>տներին տեղադրում:</p> <p>9.4. Արտահոսքը մաքրող գործիքները պետք է ճիշտ ձևով պահեստավորել, որպեսզի անհրաժեշտության դեպքում դրանք հեշտությամբ օգտագործվեն, ինչպես նաև աշխատող անձնակազմը պետք է տեղեկացված լինի դրանց ճիշտ գործածության մասին:</p> <p>9.5. Արտահոսքերի դեպքում անհրաժեշտ է հեռացնել աղտոտված հողային զանգվածը՝ հնարավոր աղտոտումը կանխելու համար: Աղտոտված հողային զանգվածը պահել և տեղափոխել թույլատրված աղբավայր հատուկ պաշտպանիչ տոպրակներով:</p> <p>9.6. Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	--	---	--	--	--



		<p>պատաստների անկայությունը:</p> <p>9.9. Արտակարգ պատահարի դեպքում անմիջապես անհրաժեշտ է տեղեկացնել ՀՏՁ-ին հաշվետվության հատուկ ձևը լրացնելու միջոցով (ՀԱՎԵԼՎԱԾ 3):</p>	Կապալառու		
<b>8. Թափոնների և նյութերի կառավարման պլան</b>					
<p>10. Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ</p>	<p>Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից իրենցից պոտենցիալ վտանգ են ներկայացնում:</p>	<p>10.1. Կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարական թափոններն ու աղբը՝ փոշին և շին աղբի երկարատև կուտակումը և երթնեկության խոչընդոտները կանխելու համար:</p> <p>10.2. Անհրաժեշտ է դասակարգել աղտոտված հողը, աղբն ու շինարարական մյուս թափոններն ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ և վտանգավոր:</p> <p>10.3. Աղտոտված հողը,</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	<p>ՀՏՁ ՏՎԽ</p>	

		<p>անհրաժեշտ է տեղադրել աղբի համար թույլատրված վայրերում փակ/մեկուսացված հատուկ տարաններով (տես 9.5):</p> <p>10.4. Շին հրապարակի տարածքի սահմաններում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր:</p> <p>10.5. Շին աղբի հավաքումը և պարբերաբար հեռացումն անհրաժեշտ է իրականացնել Միլիկյան թաղամասին հարող նախկին քարահանքի տարածքում գործող շին թափոնների համար նախատեսված աղբավայր (Երևանի քաղաքապետարանի 30.06.2016 հ2391-Ա որոշում):</p> <p>10.6. Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և աղբի կուտակումը շհհրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	--	--	--	--	--

		<p>տարածքում, ինչպես նաև տարածքին կից տեղադրված հասարակական աղբամանների, օգտագործումը՝ շին թափոնների հեռացման նպատակով:</p> <p>10.7. Անհրաժեշտ է դպրոցի հին շենքի ապամոնտաժման աշխատանքների ընթացքում առաջացած նյութերը տեսակավորել երկրորդային օգտագործման համար պիտանի նյութերի և շին-աղբի՝ համաձայն դպրոցի ապամոնտաժման աշխատանքների ընթացակարգերի նախագծի:</p> <p>10.8. Առաջացած երկրորդային օգտագործման համար պիտանի նյութերը հեռացնել շինարար կապալառուի պահեստամաս՝ այլ աշխատանքներում օգտգործելու նպատակով, իսկ գոյացած աղբը</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	--	--	-----------------------------------	--	--

		տեղափոխել աղբավայր (տես 10.5 ենթակետ):			
<b>9. Աշխատողների և ղեկավար անձնակազմի դասընթացներ</b>					
<b>11.</b> Աշխատողների և ղեկավար անձնակազմի վերապատրաս տում	Թերի իրագրվածության և տեղեկատվության պակասից քիտղ ազդեցություններ:	11.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ՝ այդ թվում թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն: 11.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է նաև իրագրել աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների արարողակարգի մասին: 11.3. Բոլոր վարորդներին անհրաժեշտ է իրագրել ԵԿՊ-ի վերաբերյալ:	ՀՏՁՀ Կապալառու  Կապալառու  Կապալառու	ՀՏՁՀ  ՀՏՁՀ ՏՎԽ  ՀՏՁՀ ՏՎԽ	
<b>10. Աշխատանքային տեղամասի վերականգնման և բարեկարգման պլան</b>					
<b>12.</b> Շինհրապարակ ի վերականգնումը  Դպրոցի տարածքի բարեկարգում/կան	• Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շինարարական նյութերը թափոնները և շին պարագաները:	12.1. Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝	Կապալառու	ՀՏՁՀ ՏՎԽ	

<p>աչապատում</p>		<p>չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն:</p> <p>12.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաների ապամոնտաժման և վերատեղադրման աշխատանքները:</p> <p>12.3. Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը:</p> <p>12.4. Անհրաժեշտ է իրականացնել ՀՏԶՀ-ի կողմից մշակված ընդունման-հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները:</p> <p>12.5. Անհրաժեշտ է կատարել կանաչապատման աշխատանքները Երևանի քաղաքապետարանի հետ հանաձայնեցման կանաչապատման</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
------------------	--	---	---	--	--



		նախագծային պլանի համաձայն:			
<b>ՀԵՏ ՇԵՆԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ</b>					
<b>13.</b> Թերությունների վերացման աշխատանքներ	Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները	13.1. Անհրաժեշտ է ապահովել կանաչ զանգվածի և տնկված ծառերի 90% կապահովումը և աճը: Հակառակ դեպքում անհրաժեշտ է վերատնկել և փոխարինել բոլոր վնասված կամ անառողջ տեսակները:	Դպրոցի տնօրինություն/ Կապալառու	ՀՏՁՀ Կապալառու	
<b>14.</b> Բուսականության վերականգնում	Բուսականությունը չի աճում սպասվածին համաձայն	14.1. Անհրաժեշտ է ներառել Ծրագրի համար նախատեսված թփերի և այլ բուսականությունը դպրոցի կանաչապատ տարածքների սպասարկման պլանում: 14.2. Անհրաժեշտ է իրականացնել կանաչապատված տարածքի աճի և վիճակի մշտադիտարկումներ :	Դպրոցի տնօրինություն,  ՀՏՁՀ, Դպրոցի տնօրինություն	ՀՏՁՀ Դպրոցի տնօրինություն	

15. Բնապահպանական առդիտ		15.1. Իրականացնել հետշինարարական բնապահպանական առդիտ:	ՀՏՁՀ	ՀՏՁՀ Կապալառու	
-------------------------	--	---	------	-------------------	--

10.2 Հավելված 2 Բնապահպանական կառավարման պլան՝ մոնիտորինգ

Նախագծման փուլ

Շինարարական գործողություն		Մեղմացնող միջոցառում (ըստ ՆԳՀ/ԲԿՊ)	Մեղմացման միջոցառում իրականացված է Այո/ Ոչ/ Ոչ	Պատասխանատու	Ուղղիչ գործողության պահանջ (ՈւԳՊ) այդ թվում վերջնաժամկետ	խորդ ՈւԳՊ կարգավիճակը (ուղղված է/ այլ միջոցառումներ են պահանջվում)
Նախնական գնահատման հայտ (ՆԳՀ)		Բնապահպանական փորձաքննության եզրակացությունն առկա է		ՀՏՉՀ		
Շին աղբի և թափոնների տեղադրման վայր		Թափոնների և շինարարական աղբի տեղադրման թույլտվությունն առկա է		ՀՏՉՀ		
Ծառերի և թփերի հատում		Ծառերի հատման թույլտվությունն առկա է		ՀՏՉՀ		
<b>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ</b>						
<b>Շին հրապարակ: ընդհանուր պահանջներ</b>						
Բնապահպանական կառավարում. բնապահպանական թիվ, առողջություն և աշխատանքի անվտանգություն, արտակարգ իրավիճակներ, բողոքների անդրադարձի մեխանիզմ						
Շինարարական գործողություն		Մեղմացնող միջոցառում (ըստ ՆԳՀ/ԲԿՊ)	Մեղմացման միջոցառում իրականացված է Այո/ Ոչ/ Ոչ	Պատասխանատու	Ուղղիչ գործողության պահանջ ՈւԳՊ այդ թվում վերջնաժամկետ	Նախորդ ՈւԳՊ կարգավիճակը (ուղղված է/ այլ միջոցառումներ են պահանջվում)
<b>Բնապահպանական պատասխանատուներ</b>						

Բոլոր գործողությունները	1.	Բնապահպանական/ առողջության և աշխատանքի անվտանգության պատասխանատուն նշանակված է և ներկա է շին հրապարակում				
Կառավարման միջոցառումներ						
Բոլոր գործողությունները	2.	Դպրոցի սահմաններից դուրս այլ տարածքների օգտագործումը բացառված է, այդ թվում՝ ճամբարներ, ավտոկայանատեղեր և այլն				
Բոլոր գործողությունները	3.	Ծառերի հատումն իրականացված է թույլտվությանը համապատասխան: Այլ բուսականությունը համապատասխան կերպով պաշտպանված է				
Առողջություն և աշխատանքի անվտանգություն						
Բոլոր գործողությունները	4.	Նախազգուշացնող նշաններն ու ցանկապատումն ապահովված է բոլոր բաց հորերի և շին հրապարակի շուրջը				
Հողային աշխատանքներ	5.	Բաց հորերի հետլիցն իրականացված է կարճ ժամկետներում. Անիմաստ բաց հորեր չեն նկատվել				
Բոլոր գործողությունները	6.	Կողմնակի անձանց (հատկապես աշակերտների) մուտքը շին հրապարակ հուսակլի արգելափակված է				
Բոլոր գործողությունները	7.	Բանվորներն ու ղեկավար անձնակազմն ապահովված են և կրում են արտահագուստ. և անհրաժեշտության դեպքում՝ անձնական պաշտպանիչ միջոցներ				

		ԱՊՄ				
Ասբեստի նյութեր պարունակող կառույցների ապամոնտաժում	8.	Աշխատանքներն իրականացվում են ԲՆ կողմից տրամադրված Ուղեցույցին համապատասխան Վտանգավոր նյութերի հետ աշխատող անձնակազմն ապահովված է և կրում է ԱՊՄ				
Բոլոր գործողությունները	9.	Ծրագրի և իրականացնող մարմինների մասին տեղեկատվական ցուցանակը տեղադրված է				
Բոլոր գործողությունները	10.	Աշխատողներն ապահովված են անհրաժեշտ սանիտարա հիգիենիկ պայմաններով. խմելու և կենցաղային կարիքների ջուր, ընդմիջման և հանգստի հարմարություններ, զուգարան, և այլն				
Բոլոր գործողությունները	11.	Առաջին բուժ օգնության դեղատուփն առկա է և հասանելի է բոլոր աշխատողների համար				
Բոլոր գործողությունները	12.	Կրակմարիչն առկա է, գտնվում է գործածման համար պատրաստ վիճակում և հասանելի է բոլոր աշխատողների համար				
Բոլոր գործողությունները	13.	Օրվա մութ ժամերի լուսավորումն ապահովված են				
Արտակարգ իրավիճակների պլան						
Բոլոր գործողությունները	14.	Արտակարգ իրավիճակների պատասխանատու անձը ներկա է շին հրապարակում				
Բոլոր գործողությունները	15.	Արտակարգ իրավիճակների ընթացակարգերի պաստառը կոնտակտային տվյալներով առկա				

		է, թարմացված է և փակցված է տեսանելի վայրում շին հրապարակի մի քանի հատվածներում				
Բոլոր գործողությունները	16.	Պատահարների մասին հաշվետվությունը ներկայացված է				
Բնապահպանական/ աշխատանքի անվտանգության դասընթացներ						
Բոլոր գործողությունները	17.	Աշխատողներն ուսուցանված են ՆԳՀ/ ԲԿՊ-րի մասին աշխատանքը սկսելուց առաջ				
Բոլոր գործողությունները	18.	Աշխատողներն ուսուցանված են արտակարգ իրավիճակներին արձագանքելու ընթացակարգերի մասին աշխատանքը սկսելուց առաջ				
Բոլոր գործողությունները	19.	Աշխատողները ստացել են աշխատանքի անվտանգության հրահանգավորումը աշխատանքը սկսելուց առաջ և համապատասխան գրառումներն առկա են գրանցամատյանում				
Շին հրապարակի մաքրություն						
Բոլոր գործողությունները	20.	Շին հրապարակը պահվում է մաքուր վիճակում և զերծ է շին և կենցաղային աղբից				
Բոլոր գործողությունները	21.	Տեղադրված են աղբամաններ կենցաղային աղբի հավաքման համար				
Կապը հանրության հետ և բողոքներին անդրադարձման մեխանիզմ՝ բնապահպանական հարցեր						
Բոլոր գործողությունները	22.	Տեղի են ունեցել շին աշխատանքների, բնապահպանական ազդեցությունների և մեղմացնող միջոցառումների մասին				

		հանդիպումներ ազդակիր անձանց հետ				
Բոլոր գործողությունները	23.	Բողոքների գրանցամատյանը վարվում է և առկա է շին հրապարակում: Նախորդ ստուգայցի ժամանակ նկատված բողոքները լուծված են				
Բոլոր գործողությունները	24.	Դպրոցի տնօրինությունը և այլ ազդակիրները զգուշացված են հնարավոր անհարմարությունների մասին. ջրի, էլեկտրականության ժամանակավոր դադարների և այլն				
Բնապահպանական պարամետրեր. Փոշու հսկողություն						
Հողային աշխատանքներ, նյութերի մատակարարում, առաջացած շին աղբի հեռացում	25.	Բեռնատարներն փոխադրումներն իրականացնում են փակ ծածկով				
	26.	Շին հրապարակը պարբերաբար ջրցանվում է				
	27.	Սարքավորումներն ու մեքենաներն ապահովված են գազերի սարքին կլանիչնեչով				
Աղմուկի մակարդակի հսկողություն						
Շին տեխնիկայի աշխատանքներ	28.	Շին աշխատանքների աղմուկի մակարդակը գտնվում է մոտակա ընկալիչների համար ընդունելի սահմաններում				
	29.	Սարքավորումներն ապահովված են սարքին խլացուցիչներով				
	30.	Աղմակահույց աշխատանքներն իրականացվում են դասերից հետո և օրվա ցերեկային ժամերին				
Թրթռումների մակարդակի հսկողություն						
Շին տեխնիկայի աշխատանքներ	31.	Թրթռումների ուժգնությունն ու ժամանակահատվածը հսկվում են				

Կեղտաջրերի հսկողություն:						
Հեղուկ նյութերի օգտագործման աշխատանքներ	32.	Արտահոսքերը կառավարվում են պատշաճ ձևով				
Հողային աշխատանքներ	33.	Նստվածքներով հագեցած կեղտաջրերը հասկվում են				
Հողային աշխատանքներ, նյութերի մատակարարում, առաջացած շին աղբի հեռացում	34.	Ջրահեռացման համակարգերը և ջրային այլ ուղենարը խցափակված չեն նստվածքներով և պաշտպանված են				
Մեքենաների գործածությամբ աշխատանքներ	35.	Բեռնատարների անիվները մաքրվում են մինչև շին հրապարակի լքելը և հասարակական ճանապարհներ մուտք գործելը				
Հողային աշխատանքներ	36.	Հողային անույթը հեռացված է շին հրապարակից կամ կանոնավոր կուտակված է հատուկ հատկացված ժամանակավոր կուտակման վայրում				
Շինարարական աղբի և թափոնների կառավարում						
Շին աղբի հեռացում	37.	Շին աղբը և թափոնները տեղադրված են սահմանված վայրում				
Հողային աշխատանքներ, կառույցների և ենթակառուցվածքների քանդում և ապամոնտաժում	38.	Անվտանգ թափոնները (հողային հանույթը, քարերը, բետոնե և մետաղական մասերը, այլ) կառավարվում են ԹԿՊ համապատասխան				
Վտանգավոր նյութեր այդ թվում	39.	Վտանգավոր թափոնները (այդ թվում ասբեստ պարունակող)				



աբեստ պարունակող նյութեր պարունակող կառույցների քանդում կամ ապամոնտաժում		կառավարվում են ԹԿՊ համապատասխան				
Քիմիկատների, վառելիքի, քսանյութերի, յուղի օգտագործմամբ գործողություններ	40.	Հեղուկ թափոններն ու արտահոսքերը, աղտոտված հողը կառավարվում են ԹԿՊ համապատասխան				
Շինարարական աղբի և թափոնների տեղադրման վայրեր						
Տարածքի օգտագործում	41.	Տարածքի օգտագործման համար բոլոր թույլտվություններն առկա են				
Տարածքի օգտագործում	42.	Տարածքի օգտագործման համար ՏԿՊ-ըն առկա են				
Տարածքի օգտագործում	43.	Տարածքի օգտագործումը համապատասխանում է ՏԿՊ-ին				
Տարածքի վերականգնում (այդ թվում՝ թափոնավայրերի)						
Բոլոր գործողությունները	44.					
Բոլոր գործողությունները	45.					
Բոլոր գործողությունները	46.					

### 10.3 Հավելված 3 Բողոքի գրանցման ձև

Դիմումը ներկայացնելու ամիս/ ամսաթիվը	Դիմողի անուն/ ազգանունը	Դիմողի կարգավիճակը (դպրոցի դասատու, աշակերտ, ծնող, հարևան, ձեռնարկատեր, այլ)	Բողոքի/առաջարկի բովանդակությունը	Դիմողի ստորագրությունը	Դիմումի կարգավիճակը (լուծված/ ընթացքում/ փոխանցված ՀՏՁ-ին/ չլուծված)

10.4 Հավելված 4 Արտակարգ պատահարի մասին հաշվետվության ձև

Պատահարի ամիս/ ամսաթիվը	Պատահարի նկարագրությունը	Պատահարի վերացման միջոցառումները	Միջոցառումների ժամկետները և պատասխանատուն	Պատահարի վերացման կարգավիճակը







